



## ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի)

### ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ\*

43. **Գևորգ Ա Բյուրականցի (792—795).**— Արագածոտն գավառից: Պատմության մեջ հիշվում է որպես բյուրականցի. «թե նա ալ ծերացյալ հասակին մեջ կաթողիկոսական Աթոռ բարձրացած է, և խաղաղությամբ կյանքը կնքած է»<sup>70</sup> և թաղված Դվինում:

44. **Հովսեփ Բ Փարպեցի (795—806).**— Մականվանյալն Կարին. Արագածոտն գավառից էր: Խուզիմա ոստիկանից բռնվելով՝ Դվինի բանտի մեջ չարչարվել և մահացել և այնտեղ էլ թաղվել է. «Բայց հայրապետն Յովսեփ կալեալ զառաջնորդութիւնն ամս մետասան՝ վախճանի»<sup>71</sup>:

45. **Դավիթ Բ Կակաղեցի (806—833).**— Մաղազ գավառի Կակաղ գյուղից: Համաձայն Դրասխանակերտցու մահանում և թաղվում է Դվինում. «Իսկ ապա լցեալ հայրապետին զկէտ կենաց իրոց՝ վախճանի, կալեալ զառաջնորդութիւնն ամս Ի՛է»<sup>72</sup>:

46. **Հովհաննես Դ Ովաչեցի (Ավանցի) (833—855).**— Կոտայք գավառի Ովաչեց գյուղացի: Մահացել և թաղվել է Գեղարքունյաց Մաքինեցոց վանքում. «Աստանոր ապա մեծ հայրապետն Յովհաննէս, վասն զի շրջէր ընդ վիճակեալ կողմանս գաւառին Գեղարքունոյ, լցեալ զկէտ կենաց իրոց՝ վախճանի ի մեծ ոխտի կրօնատրական կալանին Մաքինացոց, և ի նմին ոխտի սրբոյ ի հանգիստ զնա փոխէին, որ կալա զառաջնորդութիւն ամս քսաներկու»<sup>73</sup>: «Յայսմ դառնութեան ժամանակի կաթողիկոսն Յովհաննէս ոչ էր ի Դուին, այլ շրջէր լալ և այլ գաւառս յայցելութեան և ի քաջալերութիւն տառապեալ ժողովրդոց. և ունէր իր կայան հանգստի ի գեղարքունիսն ի վանս Մաքենցաց. յորում և հիւանդացեալ ի բազում ցաւոց սրտի իրոյ՝ վախճանեցաւ յամի տեառն 854 և ի թուին հայոց յգ, և թաղեցաւ յայն վանսն, կացեալ ի կաթողիկոսութեան ամս իբր ԻԲ»<sup>74</sup>: Պատմաբան կաթողի-

\* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի №№ Ա և Գ-ից:

<sup>70</sup> «Ազգապատում», մասն Ա, էջ 913—914:

<sup>71</sup> Դրասխանակերտցի, էջ 113:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 115:

<sup>73</sup> Դրասխանակերտցի, էջ 126—127:

<sup>74</sup> Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», Վնենիկ, 1785, Բ. Բ, էջ 450:

կոսին կրկնում են Չամչյանը և Ծախաթունյանը. «Վախճանի ի Գեղարքունի ի վանսն Մաքենցաց»<sup>75</sup> և ամփոփի մարմինն նորա անդին»<sup>76</sup>:

Մերոպ արքայիսկոպոս Սմբատյանը, նույնպես մեքերելով Դրասխանակերտցու վկայությունը, տալիս է հետևյալ ծանոթությունը. «Հովհաննես Ե կաթողիկոսի գերեզմանն հայտնապես արձանագրությամբ չէ երևացել, բայց վերջին վանահայր Հովհաննես վարդապետը ցույց է տալիս տաճարի արևելյան կողման մի քաղաքաված մատուռի մեջ լինել. և ես կարծեմ: Նույն վանահոր ասելով՝ Մաքենցաց վանքի մոտ մի բլրակի միջին դուռն է եկել հնադարյան աղյուս գահազան նկարներով զարդարված. ափսոս, որ չհաջողվեց ինձ գնալ տեսնել, թեև հայտնել եմ գործակալ Կյուրեղ վարդապետին գտնել և ուղարկել»<sup>77</sup>:

Մաքենցյաց վանքը գտնվում է Սուխտական Հայաստանի Վարդենիսի շրջանում: Տեղացիք այն անվանում են Ղըզ վանք, շիշակյու գյուղի մեջ: Մենք անձամբ եղանք այնտեղ մի քանի անգամներ: Վանքը աշտոպ գտնվում է խարխուլ վիճակում, իսկ Հովհաննես կաթողիկոսի գերեզման-մատուռը կիսավործան վիճակում է, սակայն, երևում է գերեզմանատեղը այնպես, ինչպես այն նկարագրում է Սմբատյան արքազանը: Տեղացիք մատուռը կոչում են նաև կաթողիկոսի գերեզման: Դա էլ ապացույց է, որ կաթողիկոս է թաղվել այնտեղ:

47. **Ջաքարիա Ա. Ջազեցի (855—876).**— Կոտայքի գավառի Ջազ գյուղից: Ծախաթունյանի ժողովում ընտրվում է կաթողիկոս աշխարհական վիճակում և մի օրվա մեջ բոլոր կրոնական աստիճանները ստանալով, հաջորդում է Հովհաննես Դ Ովսեպուն: Ունի գրած ճառեր, որոնք դեռ անտիպ են<sup>78</sup>: Թաղման վայրը՝ Դվին: «Իսկ մեծ և սուրբ հայրապետն Ջաքարիայ իբրև եկաց յառաջնորդութեան անդ իբրև ամս քսաներկու՝ վախճանեալ դնի ի քնարանի հարցն սրբոց»<sup>79</sup>: «Կացեալ Ջաքարիայ կաթողիկոսի ի հայրապետութեան ամս ԻԱ և ամիսս իբր 8-ի Դուին քաղաքի վախճանեցա»<sup>80</sup>:

Օրմանյան արքազանը «ի քնարանի հարցն սրբոց»-ը հասկանում է «Դվնա կաթողիկոսին

կից կաթողիկոսներուն կից դամբարաններուն վրա, վասնզի հայրապետանոցն ալ կը շարունակէր մնալ նույն ուստանի մեջ»<sup>81</sup>: Մի այլ գիտակ ևս վկայում է, որ Ջաքարիան «վախճանի ի Դուին քաղաքի»<sup>82</sup>: «Իսկ ինքն վախճանեցալ ի 876 իբր քսաներկու տարի նստալ ի Դվին»<sup>83</sup>:

48. **Գևորգ Բ. Գառնեցի (877—897).**— Թաղվել է Վասպուրականի Չորո վանքում: «Յայսմ տեղ վախճանելի մեծ հայրապետն Գևորգ ի գաւառն Վասպուրական. զոր տարեալ համախոսք քահանայիցն և իշխանաց աշխարհին՝ եղին զնա ի քնարանի Չորո վանաց, որ ի Տոք, մերձ յեկեղեցին»<sup>84</sup>: «Գնաց ի կողմանս Վասպուրականի, ուր հիանդացեալ զկնի սակաւ միջոցի՝ վախճանեցա ի 897 նոյն ամի. և զմարմինն տարեալ թաղեցին ի գերեզմանի Չորո վանացն Տոսպ գաւառի մերձ յեկեղեցին»<sup>85</sup>: «Վախճանեցալ քսանմեկ տարի կաթողիկոսություն ընկելն ետև, զոր թաղեցին ի Չորո վանքը»<sup>86</sup>: «Իսկ կաթողիկոսն Գևորգ տեւեալ զքազմարիմի աղէտս աշխարհին հայոց՝ գնաց ի կողմանս Վասպուրական աշխարհի, և անդ մնացեալ զժամանակ ինչ՝ հիւանդացաւ և մեռաւ»<sup>87</sup>:

49. **Մաշտոց Ա. Եղիվարդեցի (897—898).**— Երբեմն նաև Սևանցի: Եղիվարդի Գրիգոր քահանայի որդին էր: Գահավազում է 7 ամիս: Վախճանվում է 899 թվին և թաղվում Գառնիում: «Մաշտոց, այր Աստուծոյ, կացեալ ամ մի հայրապետութեան՝ փոխի առ Աստուած և նշխարք ոսկերաց նորա հանգուցեալ եղեն ի Գառնի, մերձ առ հովանոցին Խոսրոդիտոյ, զոր էր շինեալ Տըրդատայ հայոց արքայի»<sup>88</sup>:

Տրդատի հովդի արևմտյան կողմի, Մաշտոցի գերեզմանի փոքրիկ մատրան մասին Գանձակեցին գրում է. «Տէր Մաշտոց... հանգեալ ի Քրիստոս փառաւորապէս»: Եւ եղաւ մարմինն նորա ի գերեզմանի ի Գառնի հուպ առ զարմանալի թախտն Տրդատայ, և

<sup>75</sup> «Ազգապատում», մասն Ա, էջ 980:

<sup>81</sup> Ծախաթունյանց, էջ 190:

<sup>82</sup> Լ. Մ. վարդապետ Բժշկյանց, «Համառոտ նկարագիր վարոց երևելի արանց», Վենետիկ, 1850, էջ 321:

<sup>83</sup> Դրասխանակերտցի, էջ 181:

<sup>84</sup> Ծախաթունյանց, հ. Ա, էջ 191:

<sup>85</sup> Լ. Մ. վարդապետ Բժշկյանց, «Համառոտ նկարագիր վարոց երևելի արանց», Վենետիկ, 1850, էջ 212:

<sup>86</sup> Լ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Վենետիկ, 1785, հ. Բ, էջ 723:

<sup>87</sup> Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան, «Պատմություն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 160:

<sup>76</sup> Ծախաթունյանց, հ. Ա, էջ 190:

<sup>77</sup> Մերոպ արքայիսկոպոս Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի...՝ Վաղարշապատ, 1896, էջ 575:

<sup>78</sup> Լ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. Բ, Երևան, 1944, էջ 179:

<sup>79</sup> Դրասխանակերտցի, էջ 137:

<sup>80</sup> Լ. Մ. Չամչյան, «Հայոց պատմություն», Վենետիկ, 1785, հ. Բ, էջ 702:

շինեցին ի վերայ նորա եկեղեցի վայելուչ»<sup>83</sup>։ «Եւ ինքն երանելին Մաշտոց նստեալ յաթոռ հայրապետութեան զկնի Գեորգեայ ամիսս եօթն հանգեալ ի Քրիստոս և թաղեցաւ ի Գառնի ի հովանոց արքային Տրդատայ. և շինեցին ի վերայ նորա վայելուչ եկեղեցի»<sup>84</sup>։

Այսօր գոյություն ունի հիշատակածս շիրիմը. հասարակ, կիսաշարդ բազալտից, որի վրա գրված է.

Յ. Խ. Զ. ԹՎ. Ի ՔԱ. փոխց ՏՐ ՄԱՇՐ.:

Այս տապանաքարը մինչև 1909 թիվը անհայտ էր։ Երբ հայտնի հայագետ Ն. Մառը Գառնիում պեղումներ կատարեց, հայտնաբերեց նաև Մաշտոց կաթողիկոսի շիրիմը տապանաքարով և արձանագրությամբ<sup>85</sup>։

50. **Հովհաննես Ե Դրասխանակերտցի (898—929).**—Կոչվում է պատմաբան։ Հայրապետական Աթոռը Դվինից փոխադրում է Աղթամար (Վասպուրական), Գագիկ Արծրունի թագավորի հրավերով 927 թվին, ուր և կնքում է իր մահկանացուն, 929 թվին և թաղվում է Չորավանքում. «Եվ ինքն Յովհաննես կաթողիկոս կեցեալ զկնի այտորիկ այլևս փոքր ինչ ժամանակ ցաւալից ոգով՝ վախճանեցաւ մօտ ի ծերութիւն, յամի տեառն 929 և ի թոյն հայոց ՅՀԴ կալեալ զաթոռ հայրապետութեան վշտագին կենօր զամս ի է և ամիսս իբր 8 և թաղեցաւ ի Վասպուրական»<sup>86</sup>։ «Վախճանի անդ ի Վասպուրական աշխարհի»<sup>87</sup>։ Ե. Լալայանը Հովհաննես Զ կաթողիկոսի գերեզմանատեղը մատնանշում է Աղթամարում. «Կղզու արեւելահայտախային ծայրում, լեզվածն հրվանդանի վրա, ուր դեռևս մնում են Գագիկի շինած աշտարակի կիսավեր պարիսպները, կա նաև մի փոքրիկ մատուռ, որ ավանդորդն համարվում է Գագիկի ամուսին՝ Թամար թագուհու աղոթատեղին, ուր և, ասում է, թե ամիտիված է Հովհաննես Զ Դրասխանակերտցի պատմաբան կաթողիկոսի մարմինը»<sup>88</sup>։

51. **Ստեփաննոս Բ Ռշտունի (929—930).**—«Ստեփաննոս երկրորդ՝ հաւանու-

թեամբ Աշոտոյ արքայի, Գագիկայ Արծրունու, և նստաւ յԱղթամար. այլ ոչ լերկրեալ սորա յաթոռն՝ մեռաւ զկնի տարւոյ միոյ»<sup>89</sup>։ Նույնը կրկնում է Ծախաթունյանը<sup>90</sup>։

52. **Թեոդորոս Ա Ռշտունի (930—941).**—«Տէր Թեոդորոս անս ԺԱ. ի յԱղթամար. Տէր Թեոդորոս թաղած է յԱստուածածնի ժամատան՝ ի սուրբ խաչի շինեալ սա կաթողիկոս»<sup>91</sup>։ «Թեոդորոս Ա յաջորդէ զաթոռ հայրապետական անդ ի կղզին Աղթամար, և կացեալ անդէն զամս տասն և ամիսս իբր չորս՝ վախճանի և ամիտիի մարմինն ի ժամատան եկեղեցոյս ս. Աստուածածնի անդ յԱղթամար»<sup>92</sup>։ «Յաջորդեաց զիշխանութիւն կաթողիկոսութեան տէր Թեոդորոս առաջինն ի նոյն կղզոց»<sup>93</sup>։

53. **Եղիշէ Ա Ռշտունի (941—946).**—Եղբայր և հաջորդ Թեոդորոս Ա-ի։ «Եղիշէի մահվան հանգամանքներն ու գերեզմանն ալ անհայտ կը մնան մեզի»<sup>94</sup>։

54. **Անանիա Ա Մոկացի (946—968).**—Վախճանվել և թաղվել է Արգինայում. «Այս հասանէ վախճան կաթողիկոսին հայոց Անանիայի. փոխեն զնա ի հանգիստ ի վանն Արգինայի»<sup>95</sup>։ «Իսկ Անանիա կաթողիկոս կացեալ յաթոռ հայրապետութեան ամս իբ. ամս Ե. յԱղթամար և ամս ԺԷ ի Վարազ և յԱնի. վախճանեցաւ և թաղեցաւ ի գիղաքաղաքն Արգինայ մօտ յԱնի»<sup>96</sup>։ Նույնն է վկայում Ծախաթունյանը. «Անանիա ի Մոկաց յառաջնորդութենէ ուխտին Վարազայ... կացեալ ի կաթողիկոսութիւն զամս քսան և երկու՝ հինգ ամ յԱղթամար, և տասն և եօթն ամ ի Վարազ և յԱնի՝ վախճանի. որոյ մարմինն դնի ի տապանի ի գիղաքաղաքն Արգինա՝ մերձ յԱնի»<sup>97</sup>։ Օրմանյան սրբազանը Աստղիկի և Օրբելյանի հաղորդածները հաջորդաբար քննարկելով Անանիա Ա Մոկացու մահվան և թաղման մանրամասնություններին մասին գրում է. «Պարզ բացատրությամբ մը ըսված է, թե հասանէ վախճան կաթողիկոսին տեառն Ա-

<sup>84</sup> Հ. Մ. Զամչյան, «Պատմություն հայոց», հ. Բ, էջ 816:

<sup>85</sup> Ծախաթունյանց, հ. Ա, էջ 192:

<sup>86</sup> Մամվել Անեցի, էջ 99:

<sup>87</sup> Նույն տեղում, էջ 193: «Ազգապատում», մասն Ա, էջ 1080:

<sup>88</sup> Հ. Մ. Զամչյան, «Պատմություն հայոց», հ. Բ, էջ 816:

<sup>89</sup> «Ազգապատում», Ա, էջ 1084:

<sup>90</sup> Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյան, «Պատմություն հայոց», Թիֆլիս, 1910, էջ 238:

<sup>91</sup> Հ. Մ. Զամչյան, «Պատմություն հայոց», հ. Բ, էջ 840:

<sup>92</sup> Ծախաթունյանց, հ. Ա, էջ 193:

<sup>83</sup> Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն հայոց», աշխատասիրությամբ Կ. Ա. Մ. Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 81:

<sup>84</sup> Հ. Մ. Զամչյան, «Պատմություն հայոց», Վենետիկ, 1785, հ. Բ, էջ 725:

<sup>85</sup> «Ոստան», 1911 թ., էջ 562, «Արարատ», 1909, էջ 179, «Ազգապատում», մասն Ա, էջ 1012:

<sup>86</sup> Հ. Մ. Զամչյան, «Պատմություն հայոց», հ. Բ, էջ 816:

<sup>87</sup> Ծախաթունյանց, հ. Ա, էջ 192. «Ազգապատում», մասն Ա, էջ 1018—1070:

<sup>88</sup> «Ազգապատում» հանդես» գիրք 20-րդ, 1910, № 2, էջ 208:

նանհայի, որ ընթացքը ավարտած խաղաղական հանգիստի իմաստն ունի: Բայց ավելի հայտնի ալ ըսված է, թե լցեալ զատուրս իւր բարոյք ծերութեամբ վախճանեցաւ: Իսկ թաղումը եղած է ի վանան Արգիմայի: Փոխեն զնա ի հանգիստ քացատրությունը ցույց կուտա, թե մահը Արգիմայէ դուրս տեղի ունեցած է: Անիի կամ Ծիրակալանի մէջ, և մարմինը փոխադրված է Արգիմա, որ Անանիայի առժամյա հայրապետանցն էր եղած, և որ նշանավոր վանք մըն ալ կար առաջեն<sup>103</sup>:

55. **Վահան Ա. Սյունի (968—969).**—«Վահան. Զաննշէրի որդի... կոչեցաւ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց... և անտի յնա ի ծայրագոյն փառս՝ ի կաթողիկոսութիւն Հայոց, որ զկնի Տեառն Անանիայի Մոկացոյն: Եւ կացեալ ի կաթողիկոսութեան ամս 5. վախճանի ի Վասպուրական աշխարհի ի Տոսպ գավառի. ի Զորոյ վանքն որ է մերձ Բերկոյ և դնի ի դրան քաւարանին... Վահան եղաւ անդէն ի վանն Զորոյ, առ դրան եկեղեցոյն ընդ ալ կաթողիկոսութեան որք կալին անդ»<sup>104</sup>: Նոյնն է հաստատում Ծախխաթունյանը. «Մեռանի և թաղի ի Զորոյ վանս»<sup>105</sup>: «Վահան կաթողիկոս... թաղեցաւ Զորոյ վանքին մէջ»<sup>106</sup>: «Վահան թաղվեցաւ Զորովանքը, Գևորգ և Հովհաննէսի գերեզմաններուն քովը»<sup>107</sup>:

56. **Ստեփաննոս Գ. Սևանցի (969—972).**—Կրօնական վեճերի առիթով զնաց Վասպուրական: Արուսահի իշխանը ձերբակալեց նրան և բանտարկեց Կոտորոց բերդում, որ և մեռաւ 972 թվին. «Եղաւ յարգելանս ի բերդն Կոտորոց և անդ մնացեալ ամիսս ինչ մեռանի»<sup>108</sup>: «Արուսահի... Ստեփաննոս կաթողիկոս ետ վարել ի Կոտորոց բերդն... իսկ Ստեփաննոս կաթողիկոսն կեցեալ ամիսս ինչ ի բերդի անդ մեռաւ, յետ կալոյ յիշխանութեան ամս Բ»<sup>109</sup>:

57. **Խաչիկ Ա. Արշարունի (978—992).**—Համաձայն Ասողիկի թաղվել է Արգիմայում. «Յաղազս մահուան տեսն խաչկալ... սա լցեալ ատորքք, կատարեալ ժամանակս ի բարոյք ծերութեան փոխի յաշխարհէս և դնի յիւրում հանգստարանին ըստ հիւսիսոյ

կուտ եկեղեցոյն Արգիմայի, գոր ինքն շինեալ էր ի Ն.Թ. թուականին հայոց»<sup>110</sup>: Ասողիկին հետևելով Ծախխաթունյանը «992... ի վախճանի և մարմին նորա ամփոփեցաւ ի հիւսիսոյ կողմանէ եկեղեցոյն Արգիմայի՝ գոր իւր էր շինեալ»<sup>111</sup>, և Օրմանյան՝ «Խաչիկ գոր իւր էր շինեալ»<sup>112</sup>, և Օրմանյան՝ «Խաչիկի մարմինը կը թաղվի Արգիմայի կաթողիկէին հիւսիսակողմը»<sup>113</sup>:

58. **Սարգիս Ա. Սևանցի (992—1019).**—

Համաձայն Լաստիվերցոյ թաղվել է Հոռոմոսի վանքում. «Ի տոյն ժամանակս փոխի յաշխարհէ ատորք և արժանատր հայրապետն տէր Սարգիս, և է գերեզման նորա ի Հոռոմոսի վանքն»<sup>114</sup>: «Կացեալ Սարգիս կաթողիկոսի ի հայրապետութեան ամս ԻԷ, ձեռնադրեաց յԱնի քաղաք փոխանակ իւր կաթողիկոս Հայոց զտէր Պետրոս առաջին՝ գեղթայր Խաչիկ կաթողիկոսի, և ինքն կեցեալ ալ ևս ամս քանի մի՝ վախճանեցաւ, և թաղեցաւ ի Հոռոմոսի վանքն»<sup>115</sup>: Նոյնն է վկայում Ծախխաթունյանը. «և մարմին ամփոփի ի վանն Հոռոմոսի»<sup>116</sup>:

59. **Պետրոս Ա. Գետադարձ (1019—1058).**—Խաչիկ կաթողիկոսի եղբայրն էր և Անանիա կաթողիկոսի քեռորդին:

Հեղինակ է բազմաթիվ շարականների՝ «Մարտիրոսաց և հանգստեան», և հատուկ «մանկություն»-ներից շատերը իրեն եմ վերագրվում<sup>117</sup>:

Համաձայն պատմիչների՝ «Վախճանի ի Սեբաստիա. ի ս. Նշան վանն, ուրանոր ամփոփի և մարմինն»<sup>118</sup>, «Յայսմ ամի մեռանէր ամենագուլելին տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց, որ գլուխ էր մարմնոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցոյ: Սա կացեալ յայտն Հայրապետութեան զամս քառասուն և երկու և յաւելաւ առ հարս իւր... եւ թաղեցին զտէր Պետրոսն ի քաղաքն, որ կոչի Սեբաստիա, ի վանք սրբոյ Նշանին, հանդերձ բազմութեամբ»<sup>119</sup>: «Եւ հրամայեաց

<sup>110</sup> Ասողիկ, էջ 258:

<sup>111</sup> Ծախխաթունյան, հ. Ա, էջ 194:

<sup>112</sup> «Ազգապատում», հ. Բ, էջ 1143:

<sup>113</sup> «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերցոյ», աշխատ. Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 32:

<sup>114</sup> Հ. Մ. Զամչյան, «Պատմութիւն հայոց, հ. Բ, էջ 896:

<sup>115</sup> Ծախխաթունյան, հ. Ա, էջ 195:

<sup>116</sup> Մահակ վարդապետ Ամատունի, «Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 64—65, հաւ 176-րդ էջերը նվիրված են Գետադարձի շարականներին:

<sup>117</sup> Լաստիվերցի, էջ 82, Ծախխաթունյան, հ. Ա, էջ 197:

<sup>118</sup> Մատթէոս Ոռնայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 127—128:

<sup>103</sup> Օրմանյան, «Ազգապատում», հ. Բ, էջ 1110:

<sup>104</sup> Ստ. Օրբելյան, «Պատմութիւն հայոց», էջ 241 և 290:

<sup>105</sup> Ծախխաթունյան, հ. Ա, էջ 194:

<sup>106</sup> Հ. Մ. վարդապետ Բժշկյան, «Համառոտ նկարագիր երկնի արանց», Վենետիկ, 1850, էջ 821:

<sup>107</sup> Օրմանյան, «Ազգապատում», հ. Ա, էջ 1122:

<sup>108</sup> Ասողիկ, գ. Բ. Ծախխաթունյան, հ. Ա, էջ 194:

<sup>109</sup> Հ. Մ. Զամչյան, «Պատմութիւն հայոց», հ. Բ, էջ 841:

կայսրն հայրապետին դնել զաթոռ իւր ի Սեբաստիա և անտի հովուել զհօտ իւր: Եւ անդ եկաց հայրապետն մինչև ցվախճան իւր. և եղաւ անդէն ի Սեբաստիա՝ կացեալ կաթողիկոս ամս երեսուն և ինն»<sup>119</sup>:

Գետադարձի գերեզմանի վրա եղել է հետեւյալ տապանագրությունը.

«ԳԵՐԵԶՄԱՆ

ԳԵՏԱԴԱՐԶ ՊԵՏՐՈՍ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ»

Տաճարին երկու կողմը պատկերազարդ դններով երկու փոքրիկ պահարաններ շինուած են յարևելս կոյս, յորս ըստ սովորութեան Սեղաններ չիկան տակաին: Այդ Պայծառ Տաճարին սալաշատակը զարդարուած է կապտագույն չիհիներով, որք առ ոչ զգոշութեան խարիչած են: Տաճարի աջ կողմը Գետադարձ Պետրոս հոգեւոյն հայրապետին գերեզմանն է՝ որ յառաջ վանքէն դուրս է եղեր, սակայն յետոյ հանգուցեալ Հովհաննէս եպիսկոպոսի օրով ներս առնուել է: Մարմարինեալ շիրիմը խիստ փառավոր է և պատուական, որուն վրայ փայտաշէն երեք գմբէթներով չորս սիւնի վրա կանգնեալ Կաթողիկէ մը գետեղուած է համակ ոսկեզօծ և շքեղ: Հոգեւոյն Հայրապետի նկարէն պատկերը այն Կաթողիկէի տակը ամփոփուած է, սև տախտակի մը վրայ դամբանականը գրուած, որոյ օրինակն է հետեւեալը.

ՆԵՐՔԸՈՂ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐԶ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Պանծալի պսակ Ազգիս Արամեան  
Գետադարձ Պետրոս վեհա Աստուածա-

ծան,

Երկունս ճգանց և վիշտս անձանց  
Եռանդեամբ կրէ յանձին գերագանց,  
Տանջեալ շրջիւր տեղի ի տեղեաց  
Տայր արգել գետոց ջուրցն հոսանաց.  
Ռենային ջրիւք զազգ մեր զարդարէր  
Ազնիւ պերճ երգովք զբան մեծարէր.  
Ուղիքանմ հրաշիւք զինքն շողշողէր  
Դրուագ ճոխ բանից տալ ամա ճահրէր.  
Սիրալի զկեանս աստէն վճարէր  
Աճապար յերկնից կայարան չուէր  
Սահէր քառավտակ առանց պետութեան  
Րամիւրս. մարմնով ի վայրս հանգստեան  
Արդ փոխադրի յայս չքնաղ դամբան  
Զեզ լինի միջնորդ առ Տէր անխափան  
Վախճանի յամի Տեառն 1058

Փոխադրեն զՍ. Նշխարս նորին յամի  
1827»<sup>120</sup>:

<sup>119</sup> Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Երևան, 1961, էջ 95:

<sup>120</sup> Նաթանյան Պ., «Տեղեկագիր ընդհանուր վիճակին Սեբաստիոյ», Կ. Պոլիս, 1877, էջ 48:

Կ. Կոստանյանցն, որն գրել է Գետադարձի գիտական կենսագրությունը, ասում է. «Սեբաստիոյս ա. Նշան վանքումս ա. Աստվածածնի տաճարի մեջ մի հոյակապ մարմարիոնյա շիրիմի տակ հանգչում են այսօր Գետադարձ Պետրոս Ա. կաթողիկոսի նշխարները»<sup>121</sup>:

60. Խաչիկ Բ Աճեցի (1058—1065).— Պետրոս Գետադարձի քեռորդին էր: Մահանում է Փոքր Հայքի Թավրուր ավանում, որ մի որոշ ժամանակով փոխադրվել էր Հայրապետական Աթոռը. «Իսկ յետ երից ամաց արձակեցաւ տէր Խաչիկ ի թագաւորանիստ քաղաքէն, և եկեալ ի սահմանս երկրորդ հայոց՝ ի գաւառն որ կոչի Տարբնայ, անդ դադարեաց, քանզի անդ հրամայեցին նմա տեղի բնակութեան»<sup>122</sup>: «Խաչիկ կաթողիկոս երկրորդ... գնալ ի փոքրն հայս՝ ի գաւառն Զանան, ի սահմանս Տարանդայ՝ յաւանն կոչեցեալ Թավրուր՝ մերձ ի Կոկիսուն. և ետ նմա երկու վանս Տարանդայ: Հետ կարոյ Խաչկայ անդ ի Թավրուր ամիսս իբր վեց՝ առեալ զյոր կոտորածի քաղաքին Անույ, որ էր նախ հայրապետական և թագաւորական աթոռն, սուգ էառ ի վերս նորս. և հիւանդացեալ ի ցաւոց արտին՝ միանգամայն և բազում տառապանաց, զորս կրեաց ի յունաց. վախճանեցաւ յետ ամսոյ միոյ, և կացեալ ի հայրապետութեան ամս Զ»<sup>123—124</sup>:

61. Գրիգոր Բ Վկայասեր (1066—1105).—Գրիգոր Մագիստրոս իշխանի որդին էր: Աշխարհական անունը՝ Վահրամ: Ծամնդալի ժողովում, 1066 թվին, կաթողիկոս է ընտրվում:

Վախճանվում է 1105 թվականին: Գերեզմանատեղն է Քեսունի Կարմիր վանքը. «Յաւուր շաքաթու վախճանեցաւ սուրբ հայրապետն տէր Գրիգորիս և թաղեցաւ մեծաւ հանդիսի ի Կարմիր վանքն մերձ ի Քեսուն և տէր Ստեփաննոս հայր վանացն արար ժողով ի վերայ գերեզմանին նորա կրօնատրաց և քահանայից՝ և հայրապետական պատուով յողարկեաց զնա ընդ աթրբսն, և իշխանն հայոց Վասիլն և այլ ազատագունդքն հայոց արարին կոծ ի վերայ նորա և դառնակոծ արտասուոք լային առհասարակ ի վերայ նորա, վասնզի գրկեալ եղեն յայն-

<sup>121</sup> Կ. Կոստանյան, «Տեր Պետրոս Ա. Գետադարձ», Վաղարշապատ, 1897, էջ 3:

<sup>122</sup> Արիստակես Լաստիվերտցի, «Պատմութիւն», Երևան, 1963, էջ 82:

<sup>123</sup> Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Բ. Բ, էջ 988:

<sup>124</sup> Շահխաթունյանց, էջ 197—198, «Ազգապատում», մասն Ա, էջ 1266:

պիսի սուրբ Հայրապետեն, և նույն յիշեալ լային տունն հաղոց և լային զանտիրանայն իրեանց ի յօտար աշխարհ և գեղանելն ի հայրենի տանէն իրեանց»<sup>125</sup>: «Իսկ Գրիգոր վկայասէր մեծն հասնալ քարոք ծերութիւն ել և գնաց ի Ռապան մերձ ի Քեւուն քաղաք. զի իշխանն գող Վասիլ և տիկինն նորա քաղում թախանձանօք խնդրէին զնա զալ առ ինքեանս: ...Եւ յետ կալոյ նորա անդէն ամիսս ինչ ի Կարմիր վանս, որ մօտ էր ի Քեւուն քաղաք, իբրև գիտաց զմերձեանալ աւուրց վախճանի իրոյ, ետ կոչել առ ինքն ի վանս անդ գհարսեղ կաթողիկոս, և ի զալ նորա՝ կոչեաց և զգող Վասիլ... և պատմութեաց նոցա, զի զկնի մահուան նորին իսկ հարսեղի՝ Գրիգոր կացուցեն կաթողիկոս Հայոց: Եւ ինքն օրհնեալ զնոսա, և առեալ զլետին թոշակ փրկութեան, վախճանեցաւ ի թոյին հայոց ՇԾԴ. յամսեանն տրէ. այն է նոյեմբեր. ի յաւոր շաբաթօ. կացեալ ի կաթողիկոսութիւն ընդ ամենայն ամս Խ. և ամիսս իբր 8 և թաղեցաւ ի նոյն Կարմիր վանսն: Յայնժամ և Ստեփաննոս առաքինահրաշ առաջնորդ վանացն, ժողովեալ զկրօնաւորս՝ ասաց զարձանական նորա, այսինքն է որք ներքողական գովեստիք ի վերայ գերեզմանի նորին»<sup>126</sup>: Ծախաթունյանց նոյնն է վկայում. «Չմարմին նորա ամփոփեցին ի նոյն Կարմիր վանսն»<sup>127</sup>: «Քաշվեց Կարմիր վանքը, ուր և մեռաւ 1105»<sup>128</sup>: «Վկայասերը թաղվեցաւ Քեւունի Կարմիր վանքը, ուր վախճանեցաւ»<sup>129</sup>:

62. **հարսեղ Ա. Անեցի (1105—1118).**—

Մ. Ուռհայեցին մանրամասնորեն պատմում է հարսեղ Ա. Անեցու մահական պարա-

գաները. «Յայնժամ ամի՛ յամսեանն Տրէի յաւոր հինգերորդի՛ մեռանէր հայրապետն Հայոց Տէր հարսեղ. այս ինչ պատահեալ նա ի չարին ազդեցութենէ, վասնզի յաւոր միում ելանէր ի վերայ տանեացն ի գեղն, որ կոչի Վարդահերի, որ էր մերձ յանձանօք ի սահմանս Պեհեստոյ՝ աշակերտօքն հանդերձ և կայր յաղօթս քահանայիք և եպիսկոպոսօք. և յանկարծակի անկաւ և կործանեցաւ տունն. և ոչ ոմեք վնաս՝ բաց միայն Տեւոն հարաղի. վասնզի հարաւ ողն նորա ընդ պարիսպ տանն և բեկաւ և ապրեալ եղև զաւորս երիս և տայր տանել զինքն ի վանքն իւր, որ կոչի Շուրը. և ի կենդանութեանն իւր տայր զաթոռ Հայրապետութեանն իւր և զքօղն ի Տէր Գրիգորիս որդի Ապիրատին, մեռաւ Տէր հարսեղն և թաղեցաւ ի Շուրըն մեծաւ հանդիսի և հայրապետական փառօք եղաւ ի գերեզմանի»<sup>130</sup>: «հարսեղ կաթողիկոս... եւ մինչև մեռեալ էր, հրամայեաց տանել զինքն փութով ի Շուրը անապատ ի Սեւա լեւոն... և ինքն մեռաւ ի թոյին հայոց ՇԿԲ. յեօթնէրորդ աւոր տրէ ամսոյ, այսինքն ի նոյեմբերի 13, թէպէտ Վարդան դէժ յաւորս վարդաւառի. և թաղեցաւ ի Շուրը»<sup>131</sup>: Նոյնն է վկայում նաև Ծախաթունյանը. «Անկաւ և ինքն հարսեղ հայրապետ, և դիպեալ ողն նորա զքարի բեկաւ. ուստի փութացոյց տանել զինքն ի Սեւա լեւոն ի Շուրը անապատ, ուր անդ... յետ աւուրց ինչ վախճանեցաւ ի 13 աւոր ամսեանն նոյեմբերի 1113 թ., կացեալ ի հայրապետութեանն ընդ ամենայն զամս երեսուն և մի»<sup>132</sup>: «հարսեղի մարմինը թաղվեցաւ Շուրի Կարմիր վանքին մեջ Վկայասերին գերեզմանին մոտը»<sup>133</sup>:

(Շարունակելի)

<sup>125</sup> Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 800:

<sup>126</sup> Լ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1786, Բ. Գ, էջ 25—26:

<sup>127</sup> Ծախաթունյանց, Բ. Ա, էջ 200:

<sup>128</sup> Լ. Անադյան, «Հայոց անձնանունների բառարան», Բ. Ա, Երևան, 1942, էջ 554:

<sup>129</sup> Օրմանյան, «Ազգապատում», Բ. Ա, էջ 1330:

<sup>130</sup> Մ. Ուռհայեցի, էջ 329:

<sup>131</sup> Լ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», Բ. Գ, էջ 35:

<sup>132</sup> Ծախաթունյանց, Բ. Ա, էջ 201—202:

<sup>133</sup> Օրմանյան, «Ազգապատում», Բ. Ա, էջ 1346: